Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 11. Թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանությունը

1. Թանգարանները կարող են պայմանագրի հիման վրա վճարովի կամ անվճար հիմունքներով իրականացնել թանգարանային առարկաների և հավաքածուների ժամանակավոր պահպանություն՝ դրանք չընդգրկելով տվյալ թանգարանի գլխավոր մատյանում:

2. Պետական կամ համայնքային թանգարանները թանգարանային առարկաները և հավաքածուները կարող են ժամանակավոր պահպանության հանձնել այլ թանգարանների կամ կազմակերպությունների՝ պայմանագրի հիման վրա առավելագույնը երեք տարի ժամկետով՝ պայմանով, որ ապահովվեն թանգարանային առարկաների տեղափոխման, ցուցադրման և պահպանման համար անհրաժեշտ անվտանգությունը, ջերմախոնավային ռեժիմը, հասանելիությունը, և դրանք համահունչ լինեն թանգարանային առարկայի միջավայրին: Սահմանված նորմերի համապատասխանությունը գնահատում և հետագայում դիտարկում է լիազոր պետական մարմինը: Սահմանված նորմերի անհամապատասխանությունը հիմք է ժամանակավոր պահպանության հանձնելու հարցը մերժելու համար:

3. Պետական թանգարանի թանգարանային առարկայի կամ հավաքածուի ժամանակավոր պահպանության հանձնումն իրականացվում է լիազոր պետական մարմնի որոշմամբ, իսկ համայնքային թանգարանի թանգարանային առարկայի կամ հավաքածուի ժամանակավոր պահպանության հանձնումը՝ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա, համայնքի ավագանու որոշմամբ:

4. Պետական կամ համայնքային թանգարանի թանգարանային առարկաները ժամանակավոր պահպանության են հանձնվում միայն Հանրապետության նախագահի աշխատակազմին, Ազգային ժողովի նախագահի աշխատակազմին, վարչապետի աշխատակազմին, փոխվարչապետի գրասենյակին և ~~արտաքին գործերի նախարարությանը~~արտաքին գործերի և միջազգային առևտրի նախարարությանը արարողակարգային և նստավայրերում ցուցադրության նպատակով՝ պայմանով, որ

ապահովվեն թանգարանային առարկաների տեղափոխության, ցուցադրության և պահպանության պայմանակարգը, դրանց անվտանգությունը: